Ուրվագիր տասնմեկերորդ

Աստծու սրտի համաձայն եղող հովիվներ

Գրվածքների ընթերցում. Երմ 2:8, 3:15, 10:21, 23:1-4, Եսյ 40:11, Եզկ 34:11-31, Հվի 10:11, Եբր 13:20-21, Ա Պտ 2:25, 5:2, 4, Հյտ 7:16-17

I. Եհովան Երեմիա մարգարեի միջոցով խոսեց հովիվների՝ կառավարիչների մասին՝ Երմ 2:8, 10:21.

Ա. Հովիվները՝ կառավարիչները, հանցանք էին գործում Եհովայի դեմ. նրանք չէին փնտրում Եհովային, և նրանց հոտը ցրվել էր՝ 2:8, 10:21:

Բ. Հովիվները կործանում ու ցրում էին Եհովայի արոտավայրի ոչխարներին՝ 23:1-2:

Գ. Եհովան խոստացավ, որ հավաքելու է Իր հոտի մնացորդը և նրանց վերադարձնելու է իրենց արոտավայրը, և որ նրանց վրա հովիվներ է բարձրացնելու, որոնք հովվելու են նրանց, ու նրանք պտղաբերելու են ու բազմապատկվելու՝ խխ. 3-4:

Դ. Եհովան խոստացավ Իսրայելին Իր սրտի համաձայն եղող հովիվներ տալ. այդպիսի հովիվները Աստծու ժողովրդին Աստծու պատշաճ գիտություն ու հասկացողություն են տալու՝ 3:15:

II. Թե՛ Հին Կտակարանը, թե՛ Նոր Կտակարանը բացահայտում են Քրիստոսին՝ որպես Աստծու սրտի համաձայն եղող Հովվի՝ Եսյ 40:11, Եզկ 34:11-31, Հվի 10:11, Եբր 13:20-21, Ա Պտ 2:25, 5:4, Հյտ 7:16-17.

Ա. Որպես Հզորը, Կառավարողն ու Դատողը՝ Քրիստոսը գալիս է որպես Հովիվ. Նա հոգում է Իր հոտի համար այն բանով, որ կառավարում ու շտկում է Իր ոչխարներին, և այն բանով, որ կերակրում է Իր հոտը, Իր բազուկների մեջ հավաքում գառներին, Իր ծոցում կրում նրանց և առաջնորդում կթուներին՝ Եսյ 40:10-11, Մտթ 2:6, 9:36:

Բ. Եզկ 34:11-31-ում մարգարեություն կա, որ Տերն Ինքը գալու է որպես Հովիվ, որպեսզի փնտրի Իր ոչխարներին ու, որոնելով, գտնի նրանց.

1. Որպես Հովիվ՝ Տերը ազգերից հավաքելու է Իր ժողովրդին՝ Իր ոչխարներին, և նրանց վերադարձնելու է Քանանի երկիր, որը համաբովանդակ Քրիստոսի՝ որպես Աստծու մարդկանց հատկացված բաժնի նախատիպն է, որպեսզի նրանք բնակվեն բարձր լեռների վրա, որոնք խորհրդապատկերում են հարուցանված և համբարձված Քրիստոսին՝ խխ. 11, 14:
2. Երբ Տեր Հիսուսը գալիս է որպես Հովիվ, որպեսզի հոգա մեզ համար, Նա գալիս է նաև որպես Թագավոր՝ մեզ կառավարելու համար. Տիրոջ՝ մեզ համար որպես մեր Հովիվը հոգալու արդյունքը լինում է այն, որ մենք հնազանդվում ենք Նրան՝ որպես մեր Թագավորի, և ենթարկվում մեր ներսում Նրա թագավորմանն ու Նրա գահին՝ խխ. 23-24:

Գ. Քրիստոսը բարի Հովիվն է, մեծ Հովիվը, Գլխավոր Հովիվը և մեր շնչերի Հովիվը՝ Հվի 10:9-17, Եբր 13:20-21, Ա Պտ 5:4, 2:25.

1. Որպես բարի Հովիվը՝ Տեր Հիսուսը եկավ, որպեսզի մենք կյանք ունենանք և առատապես ունենանք՝ Հվի 10:10-11.

ա. Նա Իր շունչ-կյանքը՝ Իր մարդկային կյանքը դրեց՝ Իր ոչխարների համար փրկագնում կատարելու համար, որպեսզի նրանք կիսեն Իր «զոե» կյանքը՝ Իր աստվածային կյանքը՝ խխ. 11, 15, 17:

բ. Նա Իր ոչխարներին դուրս է բերում փարախից և բերում հենց Իր՝ որպես արոտավայրի, կերակրվելու վայր, որտեղ նրանք կարող են ազատորեն ուտել Իրենից և սնուցվել Իրենով՝ խ. 9:

գ. Տերն Իր հովվության ներքո հրեա և հեթանոս հավատացյալներից մեկ հոտ ձևավորեց (եկեղեցին, Քրիստոսի Մարմինը)՝ խ. 16:

2. Աստված մեռելներից հարուցանեց «մեր Տեր Հիսուսին՝ ոչխարների մեծ Հովվին, հավիտենական ուխտի արյամբ»՝ Եբր 13:20.

ա. Հավիտենական ուխտը նոր կտակի ուխտն է, որի նպատակը հոտը, այն է՝ եկեղեցին, ձեռք բերելն է, որն արդյունքում դառնում է Քրիստոսի Մարմինը և ավարտունանում է Նոր Երուսաղեմում:

բ. Որպես մեծ Հովիվը՝ Տերը մեզ համար իրական է դարձնում նոր ուխտի բովանդակությունը և մեզ մտցնում է Եբրայեցիներին ուղղված թղթում բացահայտված բոլոր դրական բաների փորձառության ու վայելքի մեջ՝ 8:8-13, 1:1-3, 2:9-18, 5:6-10, 14, 7:16, 22, 24-26, 13:1, 8, 12-15:

3. Որպես Գլխավոր Հովիվը՝ Քրիստոսն Իր հոտը հովվում է եկեղեցիների երեցների միջոցով՝ Ա Պտ 5:4.

ա. Առանց երեցների հովվության՝ եկեղեցին չի կարող կառուցվել՝ խ. 2:

բ. Երեցների հովվությունը պետք է լինի Քրիստոսի հովվելն իրենց միջոցով:

4. Որպես մեր շնչերի Հովիվը՝ պնևմատիկ Քրիստոսը վերատեսչություն է անում մեր ներքին վիճակի նկատմամբ՝ հոգալով մեր ներքին էության դրության համար՝ 2:25.

ա. Նա հովվում է մեզ՝ մեր շնչի բարեկեցության համար հոգալով և մեր ներքին էության վիճակի նկատմամբ վերատեսչություն անելով:

բ. Քանի որ մեր շունչը շատ բարդ է, մենք կարիք ունենք, որ Քրիստոսը, ով կենդանարար Հոգին է մեր հոգում, մեզ հովվի մեր շնչում, հոգա մեր մտքի, զգացմունքի և կամքի, ինչպես նաև մեր խնդիրների, կարիքների և վերքերի համար:

գ. Որպես մեր շնչերի Հովիվը՝ Տերը վերականգնում է մեր շունչը և հանգիստ է տալիս մեր շնչին՝ Սղմ 23:3ա, Մտթ 11:28-30:

5. Գալիք հավիտենությունում Քրիստոսը լինելու է մեր հավիտենական Հովիվը, ով մեզ տանելու է կյանքի ջրերի աղբյուրների մոտ՝ Հյտ 7:16-17.

ա. Որպես մեր հավիտենական Հովիվը՝ Քրիստոսը մեզ բերելու է հենց Իր մեջ՝ որպես կյանքի ջրերի աղբյուրների, որպեսզի մենք վայելենք Եռամեկ Աստծու հավիտենական բաշխումը՝ խ. 17ա:

բ. Կյանքի ջրերը մատակարարվելու են, իսկ արցունքների ջուրը՝ սրբվելու՝ խ. 17բ:

գ. Հավիտենությունում Քրիստոսի հովվելու ներքո չեն լինելու արցունքներ, քաղց և ծարավ, լինելու է միայն վայելք՝ խխ. 16-17:

III. Իր երկնային սպասավորության մեջ Տեր Հիսուսը շարունակում է այն հովվությունը, որը սկսել է Իր երկրային սպասավորության ժամանակ՝ Եբր 13:20-21.

Ա. Հվի 21:15-17-ում Տերը Պետրոսին հանձնարարեց Իր բացակայության ժամանակ կերակրել Իր գառներին և հովվել Իր ոչխարներին, քանի դեռ Ինքը երկինքներում է. սա առաքելական սպասավորության ներառումն էր Քրիստոսի երկնային սպասավորության մեջ՝ Աստծու հոտը հովվելու նպատակով.

1. Այն, ինչ Նա անում էր երկինքներում, առաքյալներն անում էին երկրի վրա, որպեսզի իրականացնեին Նրա երկնային սպասավորությունը՝ Եբր 13:20-21, Հվի 21:15-17:
2. Ինչ վերաբերում է հովվությանը՝ առաքելական սպասավորությունը համագործակցում է Քրիստոսի երկնային սպասավորության հետ՝ խխ. 15-17:

Բ. Պողոս առաքյալն այն բանի նմուշն է, թե ինչպես հովվել սրբերին՝ համագործակցելով Իր երկնային սպասավորության մեջ Քրիստոսի հովվության հետ՝ Եբր 13:20-21, 7:25-26, Ա Տմթ 1:16, Բ Կրթ 1:3-4, Գրծ 20:20.

1. Պողոսը հովվում էր սրբերին որպես կերակրող մայր ու հորդորող հայր՝ Ա Թսղ 2:7-8, 11-12:
2. Պողոսը հովվում էր Եփեսոսում եղող սրբերին՝ նրանց ուսուցանելով «հրապարակավ ու տնից տուն» (Գրծ 20:20), յուրաքանչյուր սրբի երեք տարի գիշեր ու ցերեկ արցունքներով խրատելով (խխ. 31, 19), նրանց ազդարարելով Աստծու ամբողջ որոշումը (խ. 27):
3. Պողոսն ընդլայնվել էր իր սրտում, ինչը նրան թույլ տվեց սպասավորող կյանքի ջերմ հոգացողություն ունենալ՝ Բ Կրթ 7:2-3, Ա Թսղ 2:8, Փլպ 2:19-20:
4. Պողոսն իջնում էր տկարների մակարդակին, որպեսզի կարողանար նրանց ձեռք բերել՝ Բ Կրթ 11:28-29, Ա Կրթ 9:22, հմմտ Մտթ 12:20:
5. Որպես եկեղեցին սիրող մարդ եկեղեցին սիրող Քրիստոսի հետ միասնության մեջ՝ Պողոսը պատրաստ էր ծախսելու այն ամենը, ինչ ուներ (ինչ վերաբերում էր նրա ունեցվածքին), և ծախսել այն, ինչ ինքն էր (ինչ վերաբերում էր նրա էությանը), հանուն սրբերի, որպեսզի կառուցվի Քրիստոսի Մարմինը՝ Եփս 5:25, Բ Կրթ 12:15, 11:28-29:

IV. Նրանք, ովքեր հովվում են Աստծու հոտը, պետք է հովվեն Աստծու համաձայն՝ Ա Պտ 5:2.

Ա. Հովվել Աստծու համաձայն նշանակում է հովվել համաձայն այն բանի, ինչ Աստված է Իր հատկանիշներում՝ Հռմ 9:15-16, 11:22, 33, Եփս 2:7, Ա Կրթ 1:9, Բ Կրթ 1:12:

Բ. Հովվել Աստծու համաձայն նշանակում է հովվել Աստծու բնության, ցանկության, ճանապարհի և փառքի համաձայն և ոչ թե մեր նախապատվությունների, շահերի, նպատակների և նախահակման համաձայն:

Գ. Աստծու համաձայն հովվելու համար մենք պետք է դառնանք Աստված կյանքով, բնությամբ, արտահայտությամբ և գործառույթով՝ Հվի 1:12-13, 3:15, Բ Պտ 1:4.

1. Մենք պետք է լինենք Քրիստոսի վերարտադրությունը՝ Աստծու արտահայտությունը, որպեսզի մեր հովվելու մեջ մենք արտահայտենք Աստծուն, ոչ թե «ես»-ը՝ դրա նախահակմամբ ու տարօրինա-

կությունններով հանդերձ՝ Հվի 1:18, Եբր 1:3, 2:10, Հռմ 8:29, Գղտ 4:19:

2. Մենք պետք է դառնանք Աստված ըստ Աստծու հոտը հովվելու Նրա գործառույթի՝ համաձայն այն բանի, ինչ Նա է, և համաձայն Նրա տնտեսության մեջ Նրա նպատակի՝ Եփս 4:16, Հյտ 21:2:
3. Երբ մենք մեկ ենք Աստծու հետ, մենք դառնում ենք Աստված կյանքով և բնությամբ, և Աստված ենք ուրիշներին մեր հովվելու մեջ՝ Ա Հվի 5:11-12, Բ Պտ 1:4, Ա Պտ 5:2:

V. Հովվելը, որը կառուցում է Քրիստոսի Մարմինը, փոխադարձ հովվություն է՝ Ա Կրթ 12:23-26.

Ա. Հովվել նշանակում է համաբովանդակ քնքուշ հոգացողություն ցուցաբերել հոտի նկատմամբ՝ Հվի 21:15-17, Գրծ 20:28:

Բ. Բոլոր հավատացյալները, հոգևոր աճի որ փուլում էլ գտնվեն, հովվության կարիք ունեն:

Գ. Մենք բոլորս պետք է լինենք Քրիստոսի օրգանական հովվության ներքո և մեկ լինենք Նրա հետ, որպեսզի հովվենք ուրիշներին՝ Ա Պտ 2:25, Հվի 21:16:

Դ. Մենք պետք է Աստծու հոտը հովվենք համաձայն Հոր սիրող ու ներող սրտի և համաձայն Որդու փնտրող, գտնող ու հովվող հոգու՝ Ղկս 15:4-24, 32:

Ե. Մենք և՛ ոչխարներ ենք, և՛ հովիվներ, որոնք հովվում ու հովվություն են ստանում փոխադարձության մեջ. այս փոխադարձ հովվության միջոցով Մարմինը կառուցում է ինքն իրեն սիրո մեջ՝ Եփս 4:16:

© 2020 Living Stream Ministry